Նոտարական ակտի կոդ: 741-20170419-37-1174257
Նոտարական ակտի գաղտնագիր: WE8247

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

երկու հազար տասնյոթ թվականի ապրիլի տասնինը ք. Վանաձոր

Մենք՝ **ԱՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՂՈՒԹՅԱՆՍ** ծնված՝ 10/06/1961թ., անձնագիր՝ AM0909551 տրված 033-ի կողմից 18/10/2012-ին, ՀԾՀ՝ 6014610472, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՀԱԳՆԱՁՈՐ, 3 Փ. 2 ՆՐԲ., 11 Տ, հետագայում «Վարձատու» և ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինս, որի անունից համաձայն ՀՀ Գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Հարությունյանի կողմից 14/04/2017 թ. տրված լիազորագրով հանդես Լոռու մարզային բաժնի պետի տեղակալ, արդարադատության փոխգնդապետ **ԱՐՏԱԿ ՎԻԿՏՈՐԻ ՀԱՆԵՍՅԱՆԸ** ծնված՝ 16/01/1973թ., անձնագիր՝ AM0876762 տրված 012-ի կողմից 24/09/2012-ին, ՀԾՀ՝ 2601730072, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ԼՈՒԿԱՇԻՆԻ Փ., 3 Շ, 12ԲՆ, հետագայում՝ «Վարձակալ», կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով՝ վարձատուն պարտավորվում է վարձակալի ժամանակավոր, տիրապետմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը, իսկ վարձակալը պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

1.2.Վարձատուն Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն է հանձնում ՀՀ, Լոռու մարզ,համայնք Վահագնաձոր, 4 փողոց , 1 նրբանցք, բնակելի տուն 9 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը բաղկացած է՝ 189.5 (հարյուր ութսունինը ամբողջ հինգ) քմ. ընդհանուր մակերեսով շենք-շինությունից, որից՝ բնակելի տուն - 144 (հարյուր քառասունչորս) քմ ընդհանուր մակերեսով, ծածկարան - 12.1 (տասներկու ամբողջ երկու) քմ ընդհանուր մակերեսով, գոմ - 27.3 (քսանյոթ ամբողջ երեք) քմ ընդհանուր մակերեսով, ծածկարան - 6 (վեց) քմ ընդհանուր մակերեսով և 0.059 (զրո ամբողջ զրո հիսունինը) հա հողամասը, այսուհետ՝ «Գույք»:

1.3.Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին՝ սեփականության վկայական N 24102013-06-0011, տրված 24/10/2013 թ. և այն ազատ է երրորդ անձանց իրավունքներից (այլ անձանց վաճառված,նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում), որոնք հաստատված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Վանաձորի տարածքային ստորաբաժանման կողմից 13/04/2017 թ. տրված՝ US-13042017-06-0102 տեղեկանքի:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

Վարձատուն իրավունք ունի՝

2.1.Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.2.Գույքն հանձնել ենթավարձակալության միայն վարձատուի գրավոր համաձայնությամբ:

2.3.Վարձակալից պահանջել կատարել Գույքի ընթացիկ վերանորոգումը:

2.4.Վարձակալից պահանջել Գույքը պահել սարքին և պատշաճ վիճակում և վերադարձնել սույն պայմանագրի 1.1. կետում նշված վիճակում:

Վարձատուն պարտավոր է

2.5.Գույքը հանձնել սույն պայմանգիրը ստորագրելուց հետո 1 /մեկ/ օրվա ընթացքում:

2.7.Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում և դրա բոլոր պատկանելիքներով ու իրեն վերաբերող փաստաթղթերով:

2.8.Վարձակալին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին:

2.9.Վարձակալին զգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավ, սերվիտուտ և այլն) մասին:

Վարձակալը պարտավոր է՝

2.10.Գույքը պահպանել սարքին վիճակում և օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

2.11 Կատարել Գույքի ընթացիկ վերանորոգումը վարձատուի համաձայնությամբ:

2.12.Գույքը վերադարձնել վարձատուին՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում:

2.13.Եթե Վարձատուն օտարում է գույքը՝ ապա առաջնահերթ իրավունքը տրվում է Վարձակալին:

2.14.Վճարել իր օգտագործած էլեկտրոէներգիայի, ջրի, հեռախոսի, այլ կոմունալ ծախսերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկային պարտավորությունները:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում 2017 թ. ապրիլի 19-ից մինչև 2019 թվականի

ապրիլի 19-ը:

3.2.Վարձավճարի չափը յուրաքանչյուր ամսվա համար կազմում է` 60.000 / վաթսուն հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Վարձավճարը պետք է փոխանցվի ,,ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ,, ՓԲԸ ,,ԼՈՌԻ,, մասնաճյուղում ունեցած թիվ 220054639202000 քարտային հաշվեհամարին, հաշվարկը պետք է կատարվի 2017 թվականի ապրիլի 1-ից:

3.3. 2017 թ. դեկտեմբեր ամսվա գումարը վճարել ոչ ուշ, քան 2017 թ. դեկտեմբերի 25-ը:

3.4. Եթե ծառայությունների մատուցման որոշակի մասը կատարվելու է հաջորդող տարիներին ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, ապա հաջորդող տարիներին ծառայությունների մատուցումն իրականացվում է համաձայնագիր կնքելու միջոցով: Այն դեպքում, որբ ծառայությունների մատուցման համար հաջորդ տարում ֆինանսական միջոցներ նախատեսված չլինեն, ապա պայմանագիրը լուծարվում է:

3.4. Վճարումը կատարվում է յուրաքանչյուր եռամսյակը մեկ, վերջին ամսվա վերջին օրը:

3.5.Սույն պայմանագրի կնքման հետ կապված պետ. տուրքի վճարումը կատարվում է Վարձակալի կողմից:

3.6.Կողմերը ցանկացած ժամանակ կարող են հրաժարվել պայմանագրից մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին այդ մասին:

3.7.Սույն պայմանագիրը կնքված է 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.8 Սույն պայմանագրից ծագող իրավունքները գրանցել համապատասխան անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրում համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

3.9. Վարձատուն իրավունք ունի ,,ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ,, իրավիճակների դեպքում ժամկետից շուտ միակողմանի դադարեցնել պայմանագիրը:

3.10. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման` սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

3.11. Սույն պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվումէ տուգանք` սույն պայմանագրի 2.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

3.12. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` պայմանագրի գնի 0.05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով` պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ:

3.13. Սույն պայմանագրով նախատեսված տուգանքն ու տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

3.14 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:

3.15. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.16. Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

3.17. Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը ենթակա չեն պատասխանատվության, եթե դրա պատճառ է հանդիսացել անհաղթահարելի ուժի ազդեցությունը, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

4. Կողմեր.

«Վարձատու»

ԱՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՂՈՒԱԹՅԱՆ ____________________

«Վարձակալ»

ՀՀ ԴԱՀԿ Ծառայության լիազորված անձ

ԱՐՏԱԿ ՎԻԿՏՈՐԻ ՀԱՆԵՍՅԱՆ ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

երկու հազար տասնյոթ թվականի ապրիլի տասնինը

…ու հազար տասնյոթ թվականի ապրիլի տասնինը

Սույն պայմանագիրը վավերացված է իմ «Կանաձոր» նոտարական տարածքի նոտար՝ ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, նրանց գործունակությունը,ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունակությունը ստուգված են: ՀՀ Քաղ. օր-ի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է գրանցամատյանում N 1593 - ով:

Գանձված է պետական տուրք մեկ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Թագուհի Ռազմիկի Մարտիրոսյան